# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք. Սիսիան, Սիսական 31
Հեռախոս (0283)2-33-30 ֆաքս (0283)2-33-30
էլ. հասցե http://www.sisian.amէլ. փոստ sisiancity@mail.ru, sisian.syuniq@mta.gov.am

Թիվ 163
*18 դեկտեմբերի 2017թ.*

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
Ռ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

***Հարգելի պարոն Սարգսյան***

Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի նիստի թիվ 14(Ա), 15(Ն), 16(Ն), 17(Ն), 18(Ն), 19(Ա), 20(Ն), 21(Ա), 22(Ա), 23(Ա), 24(Ա), 25(Ն), 26(Ն) և 27(Ն) որոշումները՝ կից հավելվածներով:

Առդիր՝ 110 թերթ:

Վ. ՄԻՐԱՔՅԱՆ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՄՏԻՑ No 1266
«___» __________ 201 թ.

Կատ.՝ Հ. [illegible]

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

# ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի
# ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Ք. ՍԻՍԻԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

12 դեկտեմբերի 2017 թվականի թիվ 14(Ա)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 15 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 66(Ն) որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի կողմից 2018 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի վարչական տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման կարգը հաստատելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացումը համայնքային կազմակերպությանը վերապահելու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքի կառավարման և ամենամյա գույքագրման փաստաթղթերի կարգը հաստատելու մասին:
7. Համայնքային կազմակերպությունների և բյուջետային հիմնարկի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

8. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի կազմում միավորված նախկին Աշոտավանի համայնքի «Աշոտավանի մանկապարտեզ» ՓԲԸ-ն, Բռնակոթի, Շաղատի, Շաքիի, Դարբասի, Աղիտուի, Ույծի, Նորավանի, Անգեղակոթի համայնքների նախադպրոցական ուսումնական հաստատությունները Սիսիանի համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների հետ միացման ձևով վերակազմակերպելու մասին:
9. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Սիսիանի տարածքային բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին:
10. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի մասին:
11. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը սահմանելու մասին:
12. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն համարվող գույքի (հողամասերի, շենքերի և շինությունների) օտարման 2018 թվականի ծրագիրը հաստատելու մասին:
13. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում տնային կենդանիներ պահելու համաքաղաքային կանոնները հաստատելու մասին:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ Վ.
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ. Ա.
3. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ. Հ.
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.
5. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.
6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.
7. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.
9. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.
10. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.
11. ՂԱՐԻԲՅԱՆ Բ.
12. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.
13. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.
14. ՊՈՂՈՍՅԱՆ Վ.
15. ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

**Համայնքի ղեկավար՝** **Ա. Սարգսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

12 դեկտեմբերի 2017 թվականի թիվ 15(Ն)

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 66(Ն) ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 5-րդ մասով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 15 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 66(Ն) որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Վարչական բյուջեի ծախսային մասի 09 բաժնի 5-րդ խմբի 1-ին դասի /Արտադպրոցական կրթություն/ ծրագրի 4511 /Սուբսիդիա/ հոդվածը նվազեցնել 1500.0 հազար դրամով:
2. Վարչական բյուջեի ծախսային մասի 09 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի /Նախադպրոցական կրթություն/ ծրագրի 4511 /Սուբսիդիա/ հոդվածը նվազեցնել 1580.0 հազար դրամով:

3. Վարչական բյուջեի ծախսային մասի 01 բաժնի 3-րդ խմբի 3-րդ դասի /Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ ծրագրի 4232 /Համակարգչային ծառայություններ/ հոդվածն ավելացնել 79.0 հազար դրամով:

4. Վարչական բյուջեի ծախսային մասի 08 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի /Հանգիստ, մշակույթ և կրոն/ ծրագրի 4237 /Ներկայացուցչական ծախսեր/ հոդվածն ավելացնել 1501.0 հազար դրամով, 4269 /Հատուկ նպատակային նյութեր/ հոդվածն ավելացնել 1500.0 հազար դրամով:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ Վ.
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ. Ա.
3. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ. Հ.
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.
5. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.
6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.
7. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.
9. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.
10. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.
11. ՂԱՐԻԲՅԱՆ Բ.
12. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.
13. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.
14. ՊՈՂՈՍՅԱՆ Վ.
15. ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

**Համայնքի ղեկավար** **Ա. Սարգսյան**

2017թ. դեկտեմբերի 12
ք. Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

12 դեկտեմբերի 2017 թվականի թիվ 16(Ն)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 15 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում 2018 թվականի տեղական տուրքերի տեսակները՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում տեղական տուրքերի գոտիավորումները՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում 2018 թվականի տեղական տուրքերի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 3-ի:
4. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում 2018 թվականի տեղական վճարների տեսակները՝ համաձայն հավելված 4-ի:
5. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում 2018 թվականի տեղական վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելված 5-ի:

6. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ Վ.
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ. Ա.
3. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ. Հ.
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.
5. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.
6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.
7. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.
9. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.
10 ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.
11. ՂԱՐԻԲՅԱՆ Բ.
12. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.
13. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.
14 ՊՈՂՈՍՅԱՆ Վ.
15. ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

**Համայնքի ղեկավար** **Ա. Սարգսյան**

2017թ. դեկտեմբերի 12
ք.Սիսիան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ տեսակները՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.
2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.
3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.
4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար.
5) միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար.
6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.
7) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար.
8) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար.
9) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար.
10) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար.
11) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար.
12) քաղաքային բնակավայրում ավագանու որոշմամբ, սահմանված կարգին համապատասխան, տնային կենդանիներ պահելու թույլտվության համար.
13) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների.
14) համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու համար, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու համար.
15) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար.
16) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար.
17) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատների կազմակերպման և շահագործման թույլտվության համար:

Համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ [illegible].Միրաբյան

*Հավելված 2*
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 12-ի թիվ 16(Ն) որոշման

# ՑԱՆԿ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՏԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում սահմանվում է հետևյալ գոտիավորումները՝

1) 1-ին գոտին ընդգրկում է Սիսիան քաղաքը.
2) 2-րդ գոտին ընդգրկում է Բռնակոթ, Անգեղակոթ, Դարբաս, Շամբ, Շաքի և Շաղատ բնակավայրերը.
3) 3-րդ գոտին ընդգրկում է Ախլաթյան, Աշոտավան, Ույծ, Վաղատին, Նորավան, Տոլորս, Աղիտու, Շենաթաղ, Որոտնավան, Սալվարդ, Լոր, Թասիկ, Դաստակերտ, Իշխանասար և Հացավան բնակավայրերը.
4) 4-րդ գոտին ընդգրկում է Թանահատ, Արևիս, Բալաք, Բնունիս, Գետաթաղ, Մուցք, Նժդեh, Տորունիք և Լծեն բնակավայրերը:

Համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝

*Հավելված 3*
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու
2017թ դեկտեմբերի 12-ի թիվ 16(Ն) որոշման

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ

| | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՏԵՍԱԿԸ | Տեղական տուրքի դրույքաչափը ըստ գոտիավորման, ՀՀ դրամ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | 1-ին գոտի | 2-րդ գոտի | 3-րդ գոտի | 4-րդ գոտի |
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* |
| 1) | **Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.** | | | | |
| ա. | **հիմնական շենքերի և շինությունների համար՝** | | | | |
| | մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար. | տասնհինգ հազար | տասնհինգ հազար | տասնհինգ հազար | տասնհինգ հազար |
| բ. | **սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝** | | | | |
| - | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար. | երեսուն հազար | երեսուն հազար | երեսուն հազար | երեսուն հազար |
| - | 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար. | հիսուն հազար | հիսուն հազար | հիսուն հազար | հիսուն հազար |
| - | 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար | հիսուն հազար | հիսուն հազար | հիսուն հազար | հիսուն հազար |
| - | 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար. | մեկ հարյուր հազար | մեկ հարյուր հազար | մեկ հարյուր հազար | մեկ հարյուր հազար |
| գ. | **ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝** | | | | |
| - | մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | երեք հազար | երեք հազար | երեք հազար | երեք հազար |
| - | 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | հինգ հազար | հինգ հազար | հինգ հազար | հինգ հազար |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | **համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝** | | | | |
| ա. | չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ | երեք հազար | երեք հազար | երեք հազար | երեք հազար |
| բ. | բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1)-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով. | | | | |
| գ. | նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1)-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը | | | | |
| 3) | համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ | հինգ հազար | հինգ հազար | հինգ հազար | հինգ հազար |
| 4) | համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | երեք հարյուր հազար | երկու հարյուր հազար | երկու հարյուր հազար | երկու հարյուր հազար |
| 5) | միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | երեք հարյուր հազար | երեք հարյուր հազար | երեք հարյուր հազար | երեք հարյուր հազար |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6) | համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | վաթսուն հազար | վաթսուն հազար | վաթսուն հազար | վաթսուն հազար |
| 7) | համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | հիսուն հազար | հիսուն հազար | հիսուն հազար | հիսուն հազար |
| 8) | **համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝** | | | | |
| ա. | **ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝** | | | | |
| - | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | տասը հազար | երկու հազար հինգ հարյուր | երկու հազար | մեկ հազար հինգ հարյուր |
| - | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | տասներեք հազար | տաս հազար հինգ հարյուր | տաս հազար հինգ հարյուր | տաս հազար հինգ հարյուր |
| - | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | տասնհինգ հազար | տասներեք հազար հինգ հարյուր | տասներեք հազար հինգ հարյուր | տասներեք հազար հինգ հարյուր |
| - | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | քսաներեք հազար | քսան հազար հինգ հարյուր | քսան հազար հինգ հարյուր | քսան հազար հինգ հարյուր |
| - | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | երեսունհինգ հազար | քսանհինգ հազար հինգ հարյուր | քսանհինգ հազար հինգ հարյուր | քսանհինգ հազար հինգ հարյուր |
| - | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | հիսունհինգ հազար | քառասունհինգ հազար հինգ հարյուր | քառասունհինգ հազար հինգ հարյուր | քառասունհինգ հազար հինգ հարյուր |
| բ. | **ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝** | | | | |
| - | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | տասը հազար | երկու հազար հինգ հարյուր | երկու հազար | մեկ հազար հինգ հարյուր |
| - | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | տասներեք հազար | տասը հազար հինգ հարյուր | տասը հազար հինգ հարյուր | տասը հազար հինգ հարյուր |
| - | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | տասնհինգ հազար | տասներեք հազար հինգ հարյուր | տասներեք հազար հինգ հարյուր | տասներեք հազար հինգ հարյուր |
| - | - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | քսաներեք հազար | քսան հազար հինգ հարյուր | քսան հազար հինգ հարյուր | քսան հազար հինգ հարյուր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| - | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | երեսունհինգ հազար | քսանհինգ հազար հինգ հարյուր | քսանհինգ հազար հինգ հարյուր | քսանհինգ հազար հինգ հարյուր |
| - | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | հիսունհինգ հազար | քառասունհինգ հազար հինգ հարյուր | քառասունհինգ հազար հինգ հարյուր | քառասունհինգ հազար հինգ հարյուր |
| 9) | իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար, մեկ քառակուսի մետրի համար | երեք հարյուր հիսուն | երեք հարյուր հիսուն | երեք հարյուր հիսուն | երեք հարյուր հիսուն |
| 10) | համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24 00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար | | | | |
| ա. | առևտրի օբյեկտների համար | քսանհինգ հազար | քսանհինգ հազար | քսանհինգ հազար | քսանհինգ հազար |
| բ. | հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար | հիսուն հազար | հիսուն հազար | հիսուն հազար | հիսուն հազար |
| գ. | բաղնիքների (սաունաների) համար | երկու հարյուր հազար | երկու հարյուր հազար | երկու հարյուր հազար | երկու հարյուր հազար |
| դ. | խաղատների համար | հինգ հարյուր հազար | հինգ հարյուր հազար | հինգ հարյուր հազար | հինգ հարյուր հազար |
| ե. | շահումով խաղերի համար | երկու հարյուր հիսուն հազար | երկու հարյուր հիսուն հազար | երկու հարյուր հիսուն հազար | երկու հարյուր հիսուն հազար |
| զ. | վիճակախաղերի համար | մեկ հարյուր հազար | մեկ հարյուր հազար | մեկ հարյուր հազար | մեկ հարյուր հազար |
| 11) | **համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝** | | | | |
| ա. | **հիմնական շինությունների ներսում՝** | | | | |
| - | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | հինգ հազար | հինգ հազար | հինգ հազար | հինգ հազար |
| - | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | վեց հազար | վեց հազար | վեց հազար | վեց հազար |
| - | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | տասնմեկ հազար | տասնմեկ հազար | տասնմեկ հազար | տասնմեկ հազար |
| - | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | տասնյոթ հազար | տասնյոթ հազար | տասնյոթ հազար | տասնյոթ հազար |
| - | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | քսանհինգ հազար | քսանհինգ հազար | քսանհինգ հազար | քսանհինգ հազար |
| - | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | երեսունհինգ հազար | երեսունհինգ հազար | երեսունհինգ հազար | երեսունհինգ հազար |
| բ. | **ոչ հիմնական շինությունների ներսում՝** | | | | |
| - | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | մեկ հազար | մեկ հազար | մեկ հազար | մեկ հազար |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| - | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | մեկ հազար հինգ հարյուր | մեկ հազար հինգ հարյուր | մեկ հազար հինգ հարյուր | մեկ հազար հինգ հարյուր |
| - | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | երկու հազար հինգ հարյուր | երկու հազար հինգ հարյուր | երկու հազար հինգ հարյուր | երկու հազար հինգ հարյուր |
| - | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | հինգ հազար | հինգ հազար | հինգ հազար | հինգ հազար |
| - | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | տասը հազար | տասը հազար | տասը հազար | տասը հազար |
| - | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | քսան հազար | քսան հազար | քսան հազար | քսան հազար |
| 12) | քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար օրացուցային տարվա համար | հինգ հազար | զրո | զրո | զրո |
| 13) | **ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար** | | | | |
| ա. | ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | երեք հազար | երեք հազար | երեք հազար | երեք հազար |
| բ. | թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | հինգ հազար երկու հարյուր հիսուն | հինգ հազար երկու հարյուր հիսուն | հինգ հազար երկու հարյուր հիսուն | հինգ հազար երկու հարյուր հիսուն |
| գ. | սոցիալական գովազդի համար | զրո | զրո | զրո | զրո |
| դ. | այլ արտաքին գովազդի համար | մեկ հազար հինգ հարյուր | մեկ հազար հինգ հարյուր | մեկ հազար հինգ հարյուր | մեկ հազար հինգ հարյուր |
| ե. | դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25% | երեք հարյուր յոթանասունհինգ | երեք հարյուր յոթանասունհինգ | երեք հարյուր յոթանասունհինգ | երեք հարյուր յոթանասունհինգ |
| զ. | եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ի չափով | մեկ հարյուր հիսուն | մեկ հարյուր հիսուն | մեկ հարյուր հիսուն | մեկ հարյուր հիսուն |
| 14) | Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար | մեկ հարյուր հազար | մեկ հարյուր հազար | մեկ հարյուր հազար | մեկ հարյուր հազար |
| 15) | համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար | տասը հազար | տասը հազար | տասը հազար | տասը հազար |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 16) | համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար | հինգ հարյուր հազար | հինգ հարյուր հազար | հինգ հարյուր հազար | հինգ հարյուր հազար |
| 17) | **համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝** | | | | |
| ա. | 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար | երկու միլիոն հինգ հարյուր հազար | երկու միլիոն հինգ հարյուր հազար | երկու միլիոն հինգ հարյուր հազար | երկու միլիոն հինգ հարյուր հազար |
| բ. | 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար | հինգ միլիոն | հինգ միլիոն | հինգ միլիոն | հինգ միլիոն |
| գ. | 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար | յոթ միլիոն | յոթ միլիոն | յոթ միլիոն | յոթ միլիոն |
| դ. | 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար | տասը միլիոն | տասը միլիոն | տասը միլիոն | տասը միլիոն |

Համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ [illegible]

*Հավելված 4*
*ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու*
*2017թ. դեկտեմբերի 12-ի թիվ 16(Ն) որոշման*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ տեսակները՝

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
7) համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար.
8) շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար համայնքի կողմից տրամադրվող թույլտվության վճար.
9) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար:

Համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ [signature, seal] ...ունյան

*Հավելված 5*
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 12-ի թիվ 16(Ն) որոշման

**ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ**
**2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ քսան հազար դրամ.
2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ քսան հազար դրամ.
3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ քսան հազար դրամ.
4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հիսուներկու հազար դրամ.
5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երեք հազար դրամ.
6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ զրո դրամ.
7) համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար՝
ա. կենցաղային աղբի համար ըստ հասցեի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար.
- Սիսիան քաղաքում՝ ամսական երկու հարյուր դրամ,
- գյուղական բնակավայրերում՝ ամսական մեկ հարյուր դրամ,
բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար դրամ.
8) շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար համայնքի կողմից տրամադրվող թույլտվության վճար՝ հինգ հարյուր դրամ.
9) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ մեկ հազար դրամ փոխհատուցման վճար:

Համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

12 դեկտեմբերի 2017 թվականի թիվ 17(Ն)

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով ու հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 15 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի կողմից 2018 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ Վ.
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ. Ա.
3. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ. Հ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

5. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.

6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

7. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.

9. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

10. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

11. ՂԱՐԻԲՅԱՆ Բ.

12 ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

13. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.

14. ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

15. ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

**Համայնքի ղեկավար** **Ա. Սարգսյան**

2017թ դեկտեմբերի 12
ք.Սիսիան

*Հավելված*
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 12-ի թիվ 17(Ն) որոշման

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Համայնքային ենթակայության Սիսիանի համայնքի նախադպրոցական հաստատություններ հաճախող մեկ երեխայի ամսական վարձավճարը 2018 թվականի համար սահմանվում է չորս հազար հինգ հարյուր դրամ, իսկ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Բռնակոթ, Աղիտու, Դարբաս, Ույծ, Աշոտավան, Շաղատ, Նորավան, Անգեղակոթ, Շաքի բնակավայրերի նախադպրոցական հաստատություններ հաճախող մեկ երեխայի ամսական վարձավճարը 2018 թվականի համար սահմանվում է չորս հազար դրամ.
    1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Հացավան, Բնունիս, Տորունիք և Թասիկ բնակավայրերում «Այլընտրանքային նախադպրոցական ծառայություն Սյունիքի մարզի փոքր համայնքներում» ծրագրի շրջանակներում ՄԱԿ-ի գրասենյակին կից «Քայլ առ քայլ» ԲՀ-ի կողմից և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Տոլորս բնակավայրում Վորլդ Վիժն կազմակերպության կողմից ստեղծված խմբեր հաճախող երեխաների ամսական վարձավճարը 2018 թվականի համար սահմանվում է անվճար:
2. Համայնքային ենթակայության այլ ուսումնական հաստատություններ հաճախող մեկ երեխայի ամսական վարձավճարը 2018 թվականի համար սահմանվում է՝
    1) Սիսիան քաղաքի «Ջ. Ա. Խաչատրյանի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ում՝ չորս հազար դրամ.
    2) «Սիսիանի համայնքի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ում՝ չորս հազար դրամ.
    3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի «Էմմա Այսյանի անվան Սիսիանի մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ում՝
       ա. դաշնամուրի դասարան՝ չորս հազար դրամ.
       բ. վոկալի, ջութակի, քանոնի և կլարնետի դասարաններ՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,
       գ. շեփորի և դուդուկի դասարաններ՝ երեք հազար դրամ:
    4) «Սիսիանի համայնքի շախմատի դպրոց» ՀՈԱԿ-ում՝
       ա. նախապատրաստական խումբ՝ երկու հազար դրամ.
       բ. ուսումնական խումբ՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.
       գ. ուսումնամարզական խումբ՝ երեք հազար դրամ:
    5) Սիսիան քաղաքի «Աղվան Մինասյանի անվան մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն» ՀՈԱԿ-ում՝
       ա. մարզասրահի մարզասարքերից օգտվելու վճարը 1 ժամվա համար՝ չորս հարյուր դրամ, միանվագ վճարելու դեպքում ամսական չորս հազար դրամ.
       բ. առողջարարական խումբ՝ ամսական չորս հազար դրամ.
       գ. խոհարար-հրուշակագործ, խոհարար-դիզայներ խմբեր՝ չորս հազար դրամ.
       դ.գեղանկարչության և համակարգչային խմբեր՝ երեք հազար հինգ հարյուր դրամ.
       ե. ժողովրդական և ժամանակակից պարերի խմբեր՝ չորս հազար դրամ.
       զ. վարսահարդարների, մատնահարդարների, դիմահարդարների խմբեր՝ վեց հազար դրամ.

է. հելունագործության, ուլունքագործության խմբեր՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

ը. դեկորացիաների ձևավորում խումբ՝ չորս հազար դրամ.

թ. ասմունքի խումբ՝ երկու հազար դրամ:

6) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի «Սիսիանի ֆուտբոլի դպրոց» ՀՈԱԿ-ում՝ հինգ հազար դրամ:

3. «Համո Սահյանի անվան Սիսիանի քաղաքային մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի դահլիճի վարձակալական վճարի չափ սահմանվում է մանկական միջոցառումների համար քսանհինգ հազար դրամ, բարեգործական միջոցառումների համար զրո դրամ, այլ միջոցառումների համար հիսուն հազար դրամ, թատերական խումբ՝ երեք հազար դրամ:

4. Սիսիան քաղաքի «Աղվան Մինասյանի անվան մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն» ՀՈԱԿ-ի դահլիճի վարձակալման վճարի չափը մեկ միջոցառման անցկացման համար սահմանվում է քսան հազար դրամ:

5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի «Էմմա Այդյանի անվան Սիսիանի մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի դահլիճի վարձակալման վճարի չափը մեկ միջոցառման անցկացման համար սահմանվում է քսան հազար դրամ:

6. Սիսիան քաղաքի վարչական տարածքում տեղակայված անշարժ գույքի համարակալման և հասցեավորման համար վճարի չափ սահմանվում է հինգ հազար դրամ, իսկ բնակավայրերի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

7. Սիսիանի համայնքի բազմաբնակարան շենքերի միասնական ամբողջական սպասարկման բնակարանների ընդհանուր մակերեսի յուրաքանչյուր քմ տարածքի վճարի չափ սահմանվում է ամսական բնակելի տարածքի և միասնական ամբողջական սպասարկման ոչ բնակելի ընդհանուր մակերեսի յուրաքանչյուր քմ տարածքի համար վեց դրամ:

8. Սահմանվում է համայնքի բնակիչների համար արտոնություններ և զեղչեր.

1) զոհված զինծառայողների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար՝ անվճար.

2) հաշմանդամ և խեղված երեխաների համար՝ անվճար.

3) մեկ ընտանիքից չորս և ավելի երեխաներ համայնքային ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական հաստատություններ հաճախելու դեպքում մեկ երեխայի համար՝ անվճար (ծնողի համաձայնությամբ).

4) միակողմանի ծնողազուրկ երեխաների համար սահմանված վարձավճարի 50%-ի չափով.

5) վիրավոր զինծառայողների երեխաների համար սահմանված վարձավճարի 50%-ի չափով:

Համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Մ. Միրզոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

12 դեկտեմբերի 2017 թվականի թիվ 18(Ն)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 20-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, քվեարկության արդյունքներով 15 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվության տրամադրման կարգը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում աղբահանության իրականացման կարգը՝ համաձայն հավելված 3-ի:
4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի առաջացման և դրույքաչափերը սահմանելու համար կիրառվող մեթոդները՝ համաձայն հավելված 4-ի:

5. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սանիտարական մաքրման կարգը՝ համաձայն հավելված 5-ի:
6. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ Վ.
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ. Ա.
3. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ. Հ.
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ
5. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.
6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.
7. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.
9. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.
10. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.
11. ՂԱՐԻԲՅԱՆ Բ.
12. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.
13. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.
14. ՊՈՂՈՍՅԱՆ Վ.
15. ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

**Համայնքի ղեկավար** **Ա. Սարգսյան**

2017թ. դեկտեմբերի 12
ք.Սիսիան

*Հավելված 1*
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 12-ի թիվ 18(Ն) որոշման

# Կ Ա Ր Գ

## *Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և գանձման*

### I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) կարգավորվում են Սիսիանի համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման հետ կապված հարաբերությունները:
2. Աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման համար հիմք է հանդիսանում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանելու մասին Սիսիանի համայնքի ավագանու որոշումը:
3. Սույն կարգով չեն կարգավորվում «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի առաջին մասին 8-րդ կետով սահմանված շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություններ տալու հետ կապված հարաբերությունները:

### II. Աղբահանության վճար վճարողների և նրանց շարժի հաշվառումը

4. Սիսիանի համայնքում աղբահանության վճար վճարողներ են համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի, այդ թվում՝ բնակելի շինության սեփականատեր համարվող կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող կամ օգտագործող ֆիզիկական անձինք (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերը և արտոնագրային վճար վճարողը), իրավաբանական անձինք, հիմնարկները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հիմքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում՝ վարձակալը, անհատույց օգտագործողը:
5. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը (մուտքագրումը) համայնքի բյուջե համայնքի ղեկավարի ներկայացմամբ և համայնքի ավագանու կողմից վերապահվում է ընտրված կազմակերպությանը, որը հաշվետու ամսվա համար՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը, պարտավոր է Սիսիանի համայնքի ղեկավարին ներկայացնելու ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իրենց կողմից աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների (հաշվետվություն) վերաբերյալ:
6. Աղբահանության վճար վճարողների հաշվառումն իրականացվում է վճարողների գրանցման մատյանում գրանցելու միջոցով: Վճարողների գրանցամատյանը պետք է վարվի նաև համապատասխան համակարգչային ծրագրով:

7. Սիսիանի համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառումը և հաշվարկումը կատարվում է համայնքի ավագանու կողմից սահմանված վճարի դրույքաչափերին համապատասխան՝

**կենցաղային աղբի համար՝**

ըստ բնակության հասցեի բնակվող յուրաքանչյուր բնակչի.

**ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝**

ըստ 4 հավելվածով սահմանված աղբի առաջացման և դրույքաչափերը սահմանելու համար կիրառվող մեթոդների և աղբահանության վճար վճարողների հետ կնքված պայմանագրերի:

8. Աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Սիսիանի համայնքի ղեկավարը:

## III. Աղբահանության վճարի հաշվարկը

9. Աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է ելնելով շենքի կամ շինության գործառնական նշանակությունից, ընդ որում՝

   1) բնակելի նշանակության շենքերի կամ շինությունների համար՝ փաստացի բնակվող անձերի քանակով,

   2) այլ շենքերի կամ շինությունների համար՝ ըստ արտադրվող աղբի ծավալի կամ զանգվածի՝ Սիսիանի համայնքի ավագանու կողմից սահմանված դրույքաչափերի սահմաններում:

10. Աղբահանության վճարի հաշվարկման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Սիսիանի համայնքի ղեկավարը:

## IV. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը

11. Աղբահանության վճարի հաշվարկումը և գանձումը իրականացվում են Սիսիանի համայնքի ավագանու որոշմամբ նման լիազորություններով օժտված կազմակերպության կողմից (այսուհետ՝ գանձող):
12. Գանձողը ստանում է Սիսիանի համայնքապետարանի կողմից տրամադրված՝ աղբահանության վճարի կանխիկ գանձման համար նախատեսված անդորրագրերը, որի համար Սիսիանի համայնքի կողմից լիազորված անձի (այսուհետ՝ համակարգող) և գանձողի միջև կնքվում է անդորրագրերի հանձնման և ընդունման արձանագրություն:
13. Համակարգողն իրականացնում է գանձողի կողմից գանձված անդորրագրերի ընթացիկ հաշվառման, համադրման, անդորրագրերի մնացորդների և հայտի դեպքում՝ անդորրագրերի նոր խմբաքանակների տրամադրման աշխատանքները:
14. Գանձողը համակարգողից ստանալով անդորրագրերը, իրականացնում է անդորրագրերի պահպանման և ընթացիկ հաշվառման այլ աշխատանքներ:
15. Գանձողը պարտավոր է տվյալ օրվա գանձված գումարը մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 16.00-ը բանկային համակարգի միջոցով գումարը փոխանցել համապատասխան հաշվին, իսկ անդորրագրերը՝ մինչև նույն աշխատանքային օրվա ավարտը, մուտքագրել տվյալների հաշվառման շտեմարան: Գանձված անդորրագրերի երկրորդ օրինակը՝ համապատասխան ամփոփագրով, գանձողը պարտավոր է հանձնել համակարգողին՝ մինչև գանձված գումարի փոխանցման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 15.00-ն:
16. Սիսիանի համայնքի ավագանու որոշմամբ աղբահանության վճարի հաշվառման և գանձման լիազորություններով օժտված կազմակերպությունը համայնքի ղեկավարին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իր կողմից աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման

գործառույթների իրականացման արդյունքների (հաշվետվություն) վերաբերյալ՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը:

17. Աղբահանության վճարի գանձման կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Սիսիանի համայնքի ղեկավարը:

## V. Աղբահանության վճարի հաշվարկման և վճարման ժամկետները

18. Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատված է համարվում օրացուցային ամիսը, իսկ վճարման ժամկետը յուրաքանչյուր ամսվա համար՝ տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

19. Աղբահանության վճարի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տվյալ ամսվան հաջորդող ամսվա 1-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար աղբահանության վճար վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0.15 տոկոսի չափով, դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 180 օրվա համար:

## VI. Այլ դրույթներ

20. Աղբահանության վճար վճարողների գրանցման մատյանի, աղբահանության վճարի կանխիկ վճարումների ընդունման ամփոփագրի, աղբահանության վճարի գանձման գործառույթների իրականացման վերաբերյալ հաշվետվության, ինչպես նաև սույն կարգի պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ձևերը հաստատվում են Սիսիանի համայնքի ղեկավարի կողմից:

Համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Ն. Միրզոյան

*Հավելված 2*
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու
2017թ. դեկտեմբերի 12-ի թիվ 18(Ն) որոշման

# Կ Ա Ր Գ

## *Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվության տրամադրման պայմանների*

1. Սույն կարգով սահմանվում է Սիսիանի համայնքում աղբի հավաքման և փոխադրման թույլտվություն տալու կարգը:
2. Թույլտվությունը՝ տրվում է համայնքի ղեկավարի կողմից:
3. Թույլտվություն ստանալու համար իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ հայտատու) համայնքի ղեկավարին է ներկայացնում հայտ:
4. Թույլտվություն տալու մասին հայտի բավարարումը ձևակերպվում է համայնքի ղեկավարի որոշմամբ:
5. Թույլտվություն տալու հետ միաժամանակ, ավագանու կողմից համայնքի տարածքում սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափին և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, հայտատուից գանձվում է տեղական տուրք:
6. Տեղական տուրքի վճարումը հաստատող անդորրագիրն ստանալուց հետո 3 օրվա ընթացքում հայտատուին է հանձնվում հաստատված թույլտվությունը:
7. Թույլտվություն ստանալու մասին հայտը մերժվում է, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, չեն համապատասխանում ավագանու կողմից հաստատված պայմաններին: Թույլտվություն ստանալու մասին հայտը գրավոր մերժվում է հայտի մուտքագրման օրվանից երկու օրվա ընթացքում: Թույլտվություն ստանալու մասին հայտը մերժելու դեպքում պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:
8. Թույլտվությունը չի կարող հայտատուի կողմից փոխանցվել այլ անձի կամ օգտագործվել այլ անձի կողմից:

Համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Ն. Միրզոյան

# Կ Ա Ր Գ

## *Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում աղբահանության իրականացման*

Աղբի հեռացումը Սիսիանի համայնքի վարչական տարածքից պետք է կատարվի համայնքի տարածքում տեղադրված աղբարկղերից, անհատական, բազմաբնակարան բնակելի շենքերից, հասարակական նշանակության և արտադրական կառույցներից:

Աղբի հեռացումը աղբարկղերից պետք է կատարվի մասնագիտացված աղբատար մեքենայով: Աղբը պետք է հեռացվի մինչև աղբարկղերի ամբողջությամբ լցվելը: Աղբարկղերի շրջապատում առկա և հեռացման ընթացքում թափված աղբը պետք է հավաքվի և հեռացվի: Աղբատար մեքենաները և աղբամանները պետք է ենթարկվեն ախտահանման ախտահանիչ լուծույթով:

Անհատական և բազմաբնակարան բնակելի շենքերից, հասարակական նշանակության և արտադրական կառույցներից աղբի հեռացումը պետք է կատարվի միայն աղբի հեռացման համար նախատեսված բեռնատար մեքենաներով, փաթեթավորված կամ տարրաներում լցված աղբի բարձման միջոցով: Համայնքի տարածքում առկա կենցաղային աղբը պետք է պարտադիր հեռացվի՝ անկախ աղբ առաջացնողի ներկա լինելու հանգամանքից:

Աղբահանությունը Սիսիանի համայնքում պետք է իրականացվի համաձայն հետևյալ նվազագույն ժամանակացույցի՝

Առանձնատներ՝

**երկուշաբթի և հինգշաբթի օրերին** հետևյալ փողոցների առանձնատներից՝

Իսրայելյան, 1-ին փողոց, 2-րդ փողոց, 3-րդ փողոց, Գ. Լուսավորիչ, Տեր-Ղազարյան, Արցախի, Լալայան, Աբովյան, Տերյան, Մյասնիկյան, Արամ Մանուկյան, Սպանդարյան.

**երեքշաբթի և ուրբաթ օրերին** հետևյալ փողոցներում գտնվող առանձնատներից՝

Մ. Գորկի, Ս. Եսենին, Ն. Ստեփանյան, Ս. Մկրտումյան, Կնունյանց, Մ. Սարյան, Կամոյի, Սպանդարյան, Շահումյան, Հ. Որոտնեցի, Րաֆֆի, Սայաթ-Նովա, Աղայան, Նորաշեն, Բակունց.

**չորեքշաբթի և շաբաթ օրերին** հետևյալ փողոցների առանձնատներից՝

Անդրանիկ Մանուկյան, Երիտասարդական, Խանջյան, Գետափնյա, Վ. Խորենի, Այգեստան, Շիրվանզադե, Գ. Առուստամյան, Տիգրան Մեծ, Գայի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ փողոցներ, Գայի, Պ. Սևակ և Սյունիք.

**երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին** աղբահանությունը կատարվում է քաղաքի հետևյալ վայրերում գտնվող աղբամաններից.

| *N* | *Աղբամանի գտնվելու վայրը* | *Քանակը* | *Տեսակը* |
|---|---|---|---|
| 1 | «Վառ Կանթեղ» ռեստորան | 1 | Մետաղյա |
| 2 | Իսրայելյան փողոց | 1 | Մետաղյա |
| 3 | Խանջյան փողոցի բազմաբնակարան շենքեր | 2 | Մետաղյա |
| 4 | Թիվ 5 հիմնական դպրոց | 1 | Մետաղյա |
| 5 | Ֆիզկուլտուրնիկների փողոցի բազմաբնակարան շենքեր | 3 | Մետաղյա |
| 6 | Խանջյան 3Ա բնակ. շենք | 3 | Մետաղյա |
| 7 | Իսրայել-Օրի 1Բ բնակ. շենք | 3 | Մետաղյա |
| 8 | Որոտան 1 բնակ. շենք | 4 | Մետաղյա |
| 9 | Որոտան 5 բնակ. շենք | 4 | Մետաղյա |

| | | | |
|---|---|---|---|
| 11 | Իսրայել-Օրի 5 բնակ. շենք | 3 | Մետաղյա |
| 12 | Շիրվանզադե 8 բնակ. շենք | 3 | Մետաղյա |
| 13 | Շիրվանզադե 2 բնակ. շենք | 4 | Մետաղյա |
| 14 | Չարենցի 4 բնակ. շենք | 2 | Մետաղյա |
| 15 | Որոտան 2Ա բնակ. շենք | 3 | Մետաղյա |
| 16 | Որոտան 4Ա բնակ. շենք | 4 | Մետաղյա |
| 17 | Շիրակ թաղամաս /տնակներ/ | 4 | Մետաղյա |
| 18 | ՀԱԱՀ /Հայաստ. ազգային ագրար. համալ./ | 1 | Մետաղյա |
| 19 | Հայ. էլ. ցանցեր հրվ. մ/ճ Սիսիան տ/մ | 1 | Մետաղյա |
| 20 | Թիվ 2 հիմնական դպրոց | 1 | Մետաղյա |
| 21 | Շիրվանզադե փողոց բազմաբնակարան շենքեր | 1 | Մետաղյա |
| 22 | «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ | 1 | Մետաղյա |
| 23 | ՀՀ Ոստիկանության Սիսիանի բաժին | 1 | Մետաղյա |
| 24 | Անդրանիկ Զորավար 5 բնակ. շենք | 2 | Մետաղյա |
| 25 | Շահումյան 74 բնակ. շենք | 1 | Մետաղյա |
| 26 | Գայի 14 բնակ. շենք | 3 | Մետաղյա |
| 27 | Գայի 3 բնակ. շենք | 3 | Մետաղյա |
| 28 | Գայի 2 բնակ. շենք | 2 | Մետաղյա |
| 29 | Պ. Սևակ փողոցի սկզբնամաս | 1 | Մետաղյա |
| 30 | Աղիտու բնակավայր տանող ճանապարհի բնակելի տներ | 1 | Մետաղյա |
| 31 | Հակահամաճարակային կենտրոն | 1 | Մետաղյա |
| 32 | «Դինա» հյուրանոցի հարևանությամբ | 2 | Մետաղյա |
| 33 | Արամ Մանուկյան փողոց | 2 | Մետաղյա |
| 34 | Թիվ 1 հիմնական դպրոց | 1 | Մետաղյա |
| 35 | ՀՀ ԿԳՆ «Սիսիանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ | 1 | Մետաղյա |
| 36 | Հայջրմուղ. Սիսիան մ/ճ | 1 | Մետաղյա |
| 37 | Տերյան փողոցի բնակելի տներ | 2 | Մետաղյա |
| 38 | Շահումյան 72 բնակ. շենք | 3 | Մետաղյա |
| 39 | Գ. Լուսավորիչի փողոցի բնակելի տներ | 4 | Մետաղյա |
| 40 | Բռնակոթ բնակավայր տանող ճանապարհին | 1 | Մետաղյա |
| 41 | Սիսական 9-11 բնակելի շենքեր | 5 | Պլաստմասե |
| 42 | Սիսական 13 բնակելի շենքեր | 3 | Պլաստմասե |
| 43 | «Լալաներ» հյուրանոց | 2 | Պլաստմասե |
| 44 | Հ. Որոտնեցի փողոցի բնակելի տներ | 1 | Պլաստմասե |
| 45 | Ս. Նահապետի անվան հրապարակի հարևանությամբ | 2 | Պլաստմասե |
| 46 | Գ. Նժդեհի 1-3 բնակելի շենքեր | 2 | Պլաստմասե |
| 47 | Սիսական 46Ա բնակ. շենք | 3 | Պլաստմասե |
| 48 | Սիսական 50Ա բնակ. շենք | 6 | Պլաստմասե |
| 49 | Գազի ծառայություն | 1 | Պլաստմասե |
| 50 | Իսրայելյան 39 բնակ. շենքեր | 4 | Պլաստմասե |

Գյուղական բնակավայրերից՝
**ուրբաթ օրը՝** Բռնակոթ բնակավայրից
**շաբաթ օրը՝** Ույծ բնակավայրից

Համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ [illegible]

*Հավելված 4*
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու
2017թ դեկտեմբերի 12-ի թիվ 18(Ն) որոշման

# ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐ

***Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի առաջացման և դրույքաչափերը սահմանելու համար /ըստ անշարժ գույքի նպատակային և /կամ/ գործառնական նշանակության/***

| N | *Աղբառաջացման օբյեկտ /անձ/ կամ գործունեության տեսակ* | *Առաջացած աղբի նորմափիվները ամիս/խմ* |
|---|---|---|
| **1** | **Կրպակներ** | |
| ա | - մինչև 10քմ առևտրային մակերես | 0.4 |
| բ | - 10-20 քմ առևտրային մակերես | 0.8 |
| **2** | **Մթերային խանութներ** | |
| ա | - մինչև 20 քմ առևտրային մակերես | 0.4 |
| բ | - 20-40 քմ առևտրային մակերես | 0.8 |
| գ | - 40-70 քմ առևտրային մակերես | 1.2 |
| դ | - 70-100 քմ առևտրային մակերես | 1.6 |
| ե | -100 քմ-ից ավելի առևտրային մակերես | 2 |
| **3** | **Հագուստի խանութներ** | |
| ա | - մինչև 30 քմ առևտրային մակերես | 0.4 |
| բ | - 30-50 քմ առևտրային մակերես | 0.8 |
| գ | - 50-80 քմ առևտրային մակերես | 1.2 |
| դ | - 80-100 քմ առևտրային մակերես | 1.6 |
| ե | -100 քմ-ից ավելի առևտրային մակերես | 2 |
| **4** | **Կենցաղային, տնտեսական և արդյունաբերական ապրանքների խանութներ** | |
| ա | - մինչև 50 քմ առևտրային մակերես | 1.2 |
| բ | - 50-100 քմ առևտրային մակերես | 1.6 |
| գ | - 100 քմ-ից ավելի առևտրային մակերես | 2 |
| **5** | **Ավտոտեխսպասարկման կայաններ** | |
| ա | - մինչև 50 քմ մակերես | 0.4 |
| բ | - 50-100 քմ մակերես | 0.8 |
| գ | - 100 քմ-ից ավելի մակերես | 1.2 |
| **6** | **Բենզալիցքավորման կայաններ** | |
| ա | - 1-2 լիցքավորման սարք | 0.8 |
| բ | - 3 և ավելի լիցքավորման սարք | 1.2 |
| **7** | **Գազալիցքավորման կայաններ** | |
| ա | - մինչև 2 լիցքավորման սարք | 1.2 |
| բ | - 2-ից ավել լիցքավորման սարք | 2 |
| **8** | **Վարսավիրանոցներ, գեղեցկության սրահներ** | |
| ա | - մինչև 20 քմ մակերես | 0.4 |
| բ | - 20-50 քմ մակերես | 0.8 |
| գ | - 50 քմ-ից ավելի մակերես | 1.2 |

| | | |
|---|---|---|
| **9** | **Հանրային սննդի օբյեկտներ** | |
| ա | մինչև 50 քմ մակերես | 1.2 |
| բ | 50-100 քմ մակերես | 2 |
| գ | 100 քմ-ից ավելի մակերես | 3.2 |
| դ | մինչև 10 սեղան | 1.6 |
| ե | 10-15 սեղան | 2.4 |
| զ | 15-ից ավելի սեղան | 3.2 |
| **10** | **Դեղատներ** | |
| ա | - մինչև 30 քմ մակերես | 0.4 |
| բ | - 30-60 քմ մակերես | 0.8 |
| գ | - 60 քմ-ից ավելի մակերես | 1.2 |
| **11** | **Գրասենյակներ, օֆիսներ** | |
| ա | - մինչև 40 քմ մակերես | 0.4 |
| բ | - 60-100 քմ մակերես | 0.8 |
| գ | - 100-150 քմ մակերես | 1.2 |
| դ | - 150քմ-ից ավելի մակերես | 3.0 |
| **12** | **Բուժ. հիմնարկներ** | |
| 1) | **հիվանդանոցներ և կլինիկաներ** | |
| ա | - մինչև 50 մահճակալ | 3.2 |
| բ | - 50-100 մահճակալ | 4 |
| գ | - 100 և ավելի մահճակալներ | 4.8 |
| 2) | **Ատամնաբուժարաններ** | |
| ա | - մինչև 2 սպասարկման աթոռ | 0.8 |
| բ | - 2-4 սպասարկման աթոռ | 1.2 |
| գ | - 4 և ավելի սպասարկման աթոռ | 1.6 |
| **13** | **Հանրակրթական դպրոցներ, վարժարաններ, սպորտդպրոցներ, երաժշտական դպրոցներ** | |
| ա | - 1 անձի   համար | 0.008 |
| **14** | ***Նախադպրոցական ուսումնական հաստատություններ*** | |
| ա | - 1 անձի համար | 0.032 |
| **15** | **Համալսարաններ, ինստիտուտներ, քոլեջներ** | |
| ա | - 1 անձի համար | 0.016 |
| **16** | **Հյուրանոցներ** | |
| ա | - մինչև 10 սենյակ (համար) | 1.2 |
| բ | - 10-30 սենյակ (համար) | 2 |
| գ | - 30 և ավելի սենյակ (համար) | 3.2 |
| **17** | **Բանկեր** | |
| ա | - մինչև 50 քմ մակերես | 1.2 |
| բ | - 50-100 քմ մակերես | 1.6 |
| **18** | **Թանգարաններ, պատկերասրահներ, ցուցահանդեսներ** | **0.8** |
| **19** | **Բնակչության կենցաղսպասարկման ծառայություններ (ատելյեներ, ֆոտոատելյեներ, համակարգչային և ինտերնետ ծառայություններ)** | |
| ա | - մինչև 20 քմ մակերես | 0.4 |

| | | |
|---|---|---|
| բ | - 20-50 քմ մակերես | 0.8 |
| գ | - 50-80 քմ մակերես | 1.2 |
| դ | - 80 քմ-ից ավելի մակերես | 2 |
| **20** | **Ծաղկի վաճառքի խանութներ և սրահներ** | |
| ա | - մինչև 20 քմ մակերես | 0.4 |
| բ | - 20-50 քմ մակերես | 0.8 |
| գ | - 50 քմ-ից ավելի մակերես | 1.2 |
| **21** | **Առևտրի ժամանակավոր և շարժական կետեր** | **0.4** |
| **22** | **Շուկաներ** | |
| ա | - մինչև 200 քմ մակերես | 1.2 |
| բ | - 200 քմ-ից ավելի մակերես | 2 |
| **23** | **Արտադրամասեր** | |
| ա | - մինչև 200 քմ մակերես | 2 |
| բ | - 200 քմ-ից ավելի մակերես | 2.8 |
| **24** | ***Սննդի արտադրություն*** | |
| ա | - մինչև 100 քմ մակերես | 1.2 |
| բ | - 100-200 քմ մակերես | 1.6 |
| գ | - 200 քմ-ից ավելի մակերես | 2 |
| **25** | **Տաքսի ծառայություններ** | |
| ա | - մինչև 10 քմ մակերես | 0.8 |
| բ | - 10-30 քմ մակերես | 1.2 |
| գ | - 30 քմ-ից ավելի մակերես | 1.6 |

Համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ [illegible]յան

# Կ Ա Ր Գ

## *Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սանիտարական մաքրման սխեմայի*

Սիսիանի համայնքում սանիտարական մաքրումը ներառում է ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, այգիների, պուրակների, հրապարակների, բակերի, մայթերի, կամուրջների, սիզամարգերի և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումը աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից և փողոցների երթևեկելի մասերի ջրում-լվացումը, փողոցների, կամուրջների և մայթերի՝ ձյունից և սառույցից մաքրումը, համայնքի ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների սպասարկումը:

Սանիտարական մաքրման աշխատանքները, կապված տարվա եղանակների հետ, իրենց բնույթով և խնդիրներով տարբեր են, այն սահմանափակվում է ամառային և ձմեռային մաքրմամբ:

***<u>Ամառային մաքրում.</u>*** Այն իր մեջ ընդգրկում է մաքրման ձեռքի աշխատանքի և մեքենայացված մաքրման տեխնոլոգիաները:

Հավաքարարների միջոցով իրականացվող մաքրման ձեռքի աշխատանքի հիմնական նպատակն է սահմանված նորմերին համապատասխան ապահովելու ընդհանուր օգտագործման տարածքներից աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից մաքրումը և փողոցների երթևեկելի մասերի ջրում-լվացումը՝ բարելավելու միկրոկլիման և նվազեցնել օդի աղտոտվածության աստիճանը:

Հավաքարարները մաքրվող տարածքներից աղբը հավաքում են փողոցներում տեղադրված աղբարկղերում, կամ այդ նպատակի համար հատկացված տեղերում՝ կույտերով:

Սիզամարգերից մաքրումը կատարվում է ձեռքով մաքրման միջոցով:

Մեքենայացված մաքրման դեպքում հավաքարարը մաքրում է փողոցների և հրապարակների մի մասը՝ 0.5 մետր լայնությամբ գոտիով:

Մեքենայացված մաքրման խնդիրն է ապահովել փողոցներից աղբի հեռացումը, փոշերի մաքրումը և փողոցների երթևեկելի մասի լվացումը (ջրումը) հատուկ մեքենայի միջոցով:

***<u>Ձմեռային մաքրում.</u>*** Այն իր մեջ ընդգրկում է, փողոցների, մայթերի, հրապարակների մաքրումը ձյունից, պայքար մայթերի սառցակալման դեմ, սառցակույտերի մաքրումը և հեռացումը: Բացի ձյունից, ձմեռային մաքրման դեպքում ապահովում է փողոցների, մայթերի ու հրապարակների մաքրումը (աղբի մաքրումը և հավաքումը) ձնատեղումների միջև ընկած ժամանակաշրջանում:

Կատարվել է Սիսիան քաղաքի հասարակական օգտագործման ընդհանուր տարածքների՝ փողոցների, մայթերի, հրապարակների, սիզամարգերի սանիտարական մաքրման մեկ քառակուսի մետրի սպասարկման ինքնարժեքի հաշվարկ, որի ելակետային տվյալները վերցվել է փաստացի չափագրությամբ:

# Հ Ա Շ Վ Ա Ր Կ

## *Սիսիանի համայնքում սանիտարական մաքրման ենթակա ընդհանուր օգտագործման տարածքների և առաջացող աղբի ծավալների*

Քաղաքի ընդհանուր 172787 քառ.մետր ասֆալտապատ փողոցների, մայթերի և հրապարակների տարածքից մաքրման տակ ընդգրկված է 126.627 հազար քառակուսի մետրը, որից ձեռքով մաքրմանը 97000 քառ. մետր, այդ թվում՝

ա/ երթևեկելի մաս (փողոց, մայթ հրապարակ) 66000 քառ. մետր

բ/ [illegible] 9400 քառ. մետր

Կցվում է սանիտարական մաքրման ենթակա տարածքների վերաբերյալ տեղեկությունը /հավելված 5.1/ սխեմատիկ հատակագիծը /հավելված 5.2/:

**Ընդհանուր օգտագործման տարածքներից առաջացող աղբի ծավալները կազմում են՝**

ա/ կատարելագործված ծածկույթ ունեցող մայթերի, փողոցների ու հրապարակների մեկ քառ. մետր մակերեսից տարեկան գոյանում է 15կգ ավլվածք,

բ/ սիզամարգերից գոյանում է 5կգ:

Քաղաքի մաքրվող մակերեսից կգոյանա՝

ա/ 87800 x 0.015 = 1317 : 12 x 9 = 987.75 տոննա աղբ,

գ/ 9400 x 0.005 = 46.5 : 12 x 9 = 35.2 տոննա աղբ,

**Ընդամենը՝ 1023 տոննա աղբ:**

Օրական ավլվածքը կկազմի 1023տ : 270 = 3.8տ

**Սիսիանի համայնքում սանիտարական մաքրման համար անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները**

Սիսիանի համայնքում սանիտարական մաքրման ենթակա ընդհանուր օգտագործման տարածքներից առաջացող աղբի տեղափոխումը պետք է կատարվի միայն աղբահանության համար օգտագործվող բեռնատար մեքենաների միջոցով՝ ձեռքով, իսկ աղբամաններից մեքենայացված բարձման միջոցով:

Փողոցների լվացումը պետք է կատարվի ջրող-լվացող մեքենայի միջոցով ասֆալտապատ ծածկույթի դեպքում, որը կազմում է 75787 քառ. մետր:

Փողոցներից ձյան մաքրման աշխատանքները պետք է կատարվի համապատասխան մասնագիտացված մեքենայի կամ դրան փոխարինող մեխանիզմների միջոցով:

**Սիսիանի համայնքում սանիտարական մաքրման ենթակա հուշարձաններն են՝**

1. Պանթեոն – /Զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշարձանաքարեր/ – Գ. Լուսավորիչ փողոցի հարևանությամբ,
2. 1915թ. եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան - Գ. Լուսավորիչ փողոցի հարևանությամբ,
3. Հուշարձան - Սիսական փողոցի սկզբնամասում,
4. Համո Սահյանի արձան – Գ. Նժդեհի փողոց,
5. Ստեփան Շահումյանի արձան – Սիսական փողոց,
6. Նիկողայոս Ադոնցի արձան – Ն. Ադոնցի փողոց,
7. 40 աղբյուր հուշարձան- Սիսական փողոց,
8. Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան - Սիսական փողոց,
9. Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան - Սիսիան - Իշխանասար միջհամայնքային ճանապարհի հարևանությամբ,
10. 1988թ. Երկրաշարժի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան - Շիրակի փողոց,
11. Հուշարձան աղբյուր - Սիսական փողոցի մշակույթի տան հարևանությամբ,
12. Աշոտ Նավասարդյանի կիսանդրի - Խորայելյան փողոց,
13. Գ. Նժդեհի կիսանդրի - Որոտան կինոթատրոնի հարևանությամբ,
14. Աֆղանական պատերազմի զոհերի հուշարձան - Կ. Դեմիրճյանի անվան զբոսայգի,
15. «Խնձորով տղան» հուշարձան - Չարենցի փողոց,
16. Վուրգ Ոսկանյանի վեհարձան - Սիսական փողոց,
17. Գյուղական բնակավայրերի հուշարձանների, եկեղեցիների, մատուռների տարածքներ:

Համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Լ. Միրզոյան

*Հավելված 5.1*

*Սիսիան քաղաքում սանիտարական մաքրման ենթակա ընդհանուր օգտագործման տարածքների*

| հ/հ | Փողոցի անվանումը | Մաքրվող տարածք, քմ | Մայթեր, քմ | Կանաչ տարածք, քմ | Ընդամենը մաքրվող տարածք, քմ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Անդրանիկ Մանուկյան, Խանջյան, Երիտասարդական, Գետափնյա փողոցներ | 9000 | 2500 | | 11500 |
| 2 | Հետնիոտնի կամրջից մինչև Խանջյան և Գ.Նժդեհի փողոցների խաչմերուկ, Վ.Խորենի, Նար-Դոս, Ֆիզկուլտուրնիկներ, Որոտան կենտ շենքերի, Հ.Ազոյան շենքերի բակային մաս | 9500 | 2000 | 1200 | 12700 |
| 3 | Որոտան զույգ շենքեր, Իսրայել-Օրի, Գ.Նժդեհի և Չարենցի փողոցների խաչմերուկից մինչև Չարենցի և Շիրվանզադե փողոցների խաչմերուկ, Շիրակի փողոցից մինչև քարի գործարան | 10000 | 2500 | 2500 | 15000 |
| 4 | Չարենց Շիրվանզադե խաչմերուկներից մինչև հիվանդանոց, Գ. Նժդեհի փողոցի հետնիոտնի ճանապարհով դեպի Կ.Դեմիրճյանի անվան զբոսայգի | 4500 | 3000 | 1100 | 8600 |
| 5 | Սիսական փողոց, բանկի խաչմերուկից մինչև զինվորական կոմիսարիատ, Ադամյան փողոց, հրշեջ ծառայությունից մինչև մշակույթի տուն | 9200 | 3000 | 2000 | 14200 |
| 6 | Աղջկա արձանից մինչև բանկի խաչմերուկ, աղջկա արձանից Գ.Լուսավորիչ փողոց մինչև գերեզմանատեղի | 5000 | 1800 | 1000 | 7800 |
| 7 | Մյասնիկյան,հ. Որոտնեցի, Շահումյան, Արամ Մանուկյան մինչև Սպանդարյան | 7800 | 3000 | 800 | 11600 |
| 8 | Սպանդարյան, Կամոյի փողոցներ, Գայի փողոց, Սյունիքի փողոց, Պ.Սևակ | 11000 | 4000 | 800 | 15800 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **66000** | **21800** | **9400** | **97200** |

Սիսիան քաղաքի սանիտարական մաքրման սխեմատիկ հատակագիծ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

12 դեկտեմբերի 2017 թվականի թիվ 19(Ա)

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով _15_ կողմ, _-_ դեմ, _-_ ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների իրականացումը վերապահել «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ Վ.
2. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ. Ա.
3. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ. Հ.
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.
5. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.
6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.
7. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.
8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.
9. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

10. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

11. ՂԱՐԻԲՅԱՆ Բ.

12. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

13. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.

14. ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

15. ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

**Համայնքի ղեկավար՝** **Ա. Սարգսյան**

2017թ. դեկտեմբերի 12
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

12 դեկտեմբերի 2017 թվականի թիվ 20(Ն)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 15 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքի կառավարման և ամենամյա գույքագրման փաստաթղթերի կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ 15 Դեմ -0 Ձեռնպահ -0

1 ԱՅՎԱԶՅԱՆ Վ.

2. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ. Ա

3. ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ. Հ.

4. ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

5. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Դ.

6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

7 ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա.

8. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Մ.

9. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

10. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

11. ՂԱՐԻԲՅԱՆ Բ.

12. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

13. ՆԵՐՍԻՍՅԱՆ Ն.

14. ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

15. ՍՏԵՓԱՆՅԱՆ Բ.

**Համայնքի ղեկավար** **Ա. Սարգսյան**

2017թ. դեկտեմբերի 12
ք.Սիսիան

*Հավելված*
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու
2017թ դեկտեմբերի 12-ի թիվ 20(Ն) որոշման

# Կ Ա Ր Գ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքի կառավարումը սահմանվում է որպես համայնքային գույքի գույքագրման և կառավարման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինի կողմից քաղաքականության մշակում, հաստատում և իրականացում:
2. Համայնքային գույքի կառավարման նպատակներն են.
   1) համայնքային գույքի կառավարման (տնօրինում, տիրապետում, օգտագործում, այդ թվում և գույքի գրավադրում) արդյունավետության բարձրացում,
   2) համայնքի եկամուտների ավելացում,
   3) համայնքային ծառայությունների մատուցման բարելավում:

*Համայնքային գույքի կառավարման խնդիրներն են.*

1) համայնքային գույքի հաշվառման, պահպանման, տնօրինման ու օգտագործման համայնքային միասնական քաղաքականության հիմնադրույթների մշակում և դրանց իրականացում,
2) համայնքային գույքի կառավարման գործընթացների մեթոդական ապահովում:

3. Համայնքային գույքի կառավարման բնագավառում համայնքի ղեկավարի հանձնարարությամբ քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքները համայնքապետարանի աշխատակազմում ապահովում են անշարժ գույքի կառավարման մասով՝ աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժինը՝ գյուղատնտեսական նշանակության հողերի և շինությունների, քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժինը՝ քաղաքաշինական նշանակության հողերի և շինությունների, իսկ շարժական և այլ գույքի մասով՝ աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական և սոցիալ տնտեսական զարգացման բաժինը:

## II. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Համայնքային գույքի կառավարման վերաբերյալ նշված բաժինների կողմից իրականացվում է հետևյալ գործառույթները՝

1) համայնքի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ համայնքային գույքի կառավարման, սեփականության իրավունքի ճանաչման և արդյունավետ օգտագործման վերաբերյալ,
2) մասնակցում է համայնքային գույքի գույքագրման աշխատանքներին, որոնց արդյունքների վերաբերյալ համայնքի ղեկավարին ներկայացնում է հաշվետվություններ,
3) իրականացնում է համայնքային գույքի հաշվառման աշխատանքներ և համայնքային գույքը ներկայացնում պետական գրանցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
4) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մշակում և իրականացնում է համայնքային գույքի կառավարման քաղաքականությունը,
5) համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մշակում է համայնքային գույքի օգտագործման, վարձակալության և օտարման ծրագրեր և դրանց լրացումների ու փոփոխությունների նախագծեր, դրանք տրամադրում է համայնքի ղեկավարին՝ համայնքի ավագանու քննարկմանը ներկայացնելու նպատակով,

6) մասնակցում է համայնքային գույքի (անշարժ և շարժական գույք) օտարմանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Գույքի օտարման նախապատրաստական աշխատանքներն իրականացնելու նպատակով համայնքի ղեկավարին առաջարկում է ներգրավել փորձագետներ և մասնագետներ, այդ թվում՝ փորձաքննության նպատակով,
7) համայնքի ղեկավարին առաջարկություն է ներկայացնում համայնքային գույքի հրապարակային օտարման մեկնարկային և ուղղակի վաճառքի գների, ինչպես նաև օգտագործման տրամադրման վճարների նվազագույն ու առավելագույն չափերի մասին,
8) համակարգում է օտարվող համայնքային գույքի արժեքի հաշվարկման (գնահատման և վերագնահատման) աշխատանքները,
9) իրականացնում է վերահսկողություն համայնքի կողմից կնքված պայմանագրերով մյուս կողմերի համար նախատեսված պարտավորությունների կատարման նկատմամբ,
10) կազմակերպում է օտարվող և օգտագործման տրամադրվող համայնքային գույքի վերաբերյալ տեղեկությունների, այդ թվում հայտարարությունների հրապարակումը,
11) իրականացնում է համայնքային գույքի կառավարման գործընթացների վերլուծություններ,
